Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 67

ք. Երևան **04.04.2018 թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/588-18, ՀՀ բնապահպանության 3/02.2/30046-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/704-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/828-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 02/14.1/2069-18 նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11.1/493-18, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/747-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները և մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 2018 թվականի մարտի 22-ի նիստի N **24.9/[443739]-18** արձանագրության 7-րդ կետը՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի** մարզի **Տեղ** համայնքի **Վաղատուր** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Տեղ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության **0.03** հա /կադաստրային ծածկագիր՝ **09-090-0106-0001-ից**/ ոչ անտառածածկ տարածք փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակության՝ բջջային կապի կայանների շինարարության համար:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ռ. Մինասյան